



62. ՍԱԼԲԻԱՐ

Ժամանակով մե թաքավոր ա հըլնում: Էս թաքավորն ունեւ մե տղա՝ Փեղուլխան անունով: Թաքավորը Փեղուլխանին պսակում ա, մե իշխանի ախճիկ ա ուզում, հիրա տղի սիրածն էր: Վազրի ախճիկը չիչ ա մնում հերսից պաղոտի, որ հիրանը չեն ուզե, իշխանի ախճիկ են ուզե: Հըմա ձեռին հնար չըկար, չէր հիմանում, թե ինչ անա:

Թաքավորը տղին որ պսակում ա, երգորթ օրը կոխվ ա սկսվում: Հարևան թաքավորը մեծ գորքով հարցակվում ա էս թաքավորի երգրի վրեն: Թաքավորն հինքը ծերցեր էր, գորք ա կազմում, տալում ա Փեղուլխանին, հղրկում ա կոխվ: Կոխվը քաշում ա մե տարի: Որ հընցնում ա իննը ամիս, իննը օր, էս թաքավորի խարսը մե տղա յա բերում: Թաքավորը տղին նամակ ա գրում, հղրկում ա, թե աչկըտ լուս, տղա ունես:

Վազրի ախճիկը հետևում էր: Տատմորը ոսկի յա տալում, որ նամակը փոխեն: Նամակը տարողն էր տատմոր տղեն: Նամակը քչերը տատմերը տանում ա վազրի ախճկա մոտը, փոխում են, նոր նամակ են դնում փագեթի մեջը, գրում են, որ. «Ձես ասի, կնիկտ պարկեր ա, շան թուլա յա բերե»: Հառավոտ պառվի տղեն հըլնում, շուտ էթում ա, իրեք օր ետո պատասխանը բերում ա: Օրը հիրկուն ա հըլնում, գալում ա էլի հիրանց տունը: Տատմեր պառավն էլի նամակը տանում ա վազրի ախճկա մոտը: Բացում են նամակը կարթում են, տենում են, որ Փեղուլխանը գրեր ա, թե. «Շան թուլա յա, էչի թուլա յա, կնգաս բան չասեք, կըպախեք, չանք ես գամ»:

Էս նամակը փոխում են, նոր նամակ են դնում: Գրում են, որ. «Ա՛յ խեւ, էրեխին էլ, մորն էլ տանից դուս կանես, էտ էրեխեն իմը չի, բիճ ա»:

Թաքավորը նամակն ստանում ա, զարմանում ա, հըմա ի՞նչ աներ, կանչում ա խարսին, նշանց ա տալում մարթի նամակը, մեշու ոսկի ա տալում ու տնից դուս ա անում: Էս խեխճ խառսը էրեխեն վերցում ա, էլ խոր տունը ամոթու չի էթում, էթում ա մե անծանոթ երգիր, պատահում ա մե չոբանի: Էս չոբանը, որ տենում ա մորն ու էրեխին, բերում ա հիրա տունը, լավ պատվում, հարքում ա, ետո խառցնում ա, թե որդեղից ա գալում, հուր ա էթում:

Թաքավորի խառնը պատմում ա, որ Հինքը անտեր կնիկ ա, մարթին կորցեր ա, Հինքն էլ չի հիմանում, թե դոր ա էթում: Չորանն ասում ա, որ. «Դու կրմնաս մեր տունը, ես էրեխա չունեմ, դու իմ ախճիկը, էտ էլ իմ թողը»: Ախճիկը համաձայնվում ա ու մնում ա ըստե:

էս չորանը էլ Աղասու չորանն էր: էլ Աղասին մորն էլ, տղին էլ տենում ա: Խոսալուց հիմանում ա, որ էս էրեխեն ու մերը անպաճառ մե իշխանի, յա Թաքավորի ցեղից են, տանում ա Հիրա տունը, օթաղ ա տալում, տերդեր ա բերում, էրեխին կնքում են, անունը դնում են Սալբիար, մոր խետ էլ էս էլ Աղասին դառնում ա քուր ու ախպեր:

Խեչմթի էրեխեն չուտ ա ջոչնում: Սալբիարն էլ էտ տեսակ էրեխեքից էր: Ով ամսով ու տարով էր ջոչնում, Սալբիարը ժամով ու օրով էր ջոչնում: Որ դարցավ օխտ ութ տարեկան, սկսեց էրեխեքի խետ խաղալ ու կռիվ անել: էրեխեքը Սալբիարին հակառ ին հընգնում, «բիճ» ին ասում, վրեն ծծղում ին, հըմենն մեկին հըլնում տփում ին: Սալբիար, դու Սալբիար, վերցում էր էրեխեքի թևից չպրտում էր: Մեկի թևն էր տեղից խանում, մեկի ոտն էր տալում կողրում, մեկի չիթ-մոռլթն էր արունկվա անում ու հղրկում տունը: էրեխեքի տերերը գացին էլ Աղասու մոտը գանգատ ու պահանջին, որ էլ Աղասին էտ էրեխին խառիչ անա, երգրից եռացնա: էլ Աղասին կանչեց, Սալբիարին թամբանխ արավ, որ մեկ էլ էտենց բան չանա:

Սալբիարի մերը որ լսաց, գնաց էլ Աղասուն շատ խնթիրք արավ, որ իրավունք տա, մեր ու տղա էթան հուրիչ տեղ, հիրանց պաճառով թո էլ Աղասուց ժողովուրթը չընեղանա:

Հըմա էլ Աղասին ասավ. — Սալբիարը ինչ էլ անա, ես չեմ նեղանա: Իմ քվորն ու իմ քվոր տղին ես տնից խրկելու իրավունք չունեմ: էս տան ձեսը ձերն ա, ձեսը իմն ա:

Մե օր էլ Սալբիարը էկավ էլ Աղասու մոտ, թե՝ ես ուզում եմ գառնարած դառնամ, հընչի՞ր պարապ նստեմ:

էլ Աղասին իրավունք տվեց, որ Սալբիարը գառները պախա: Սալբիարը հառավոտ գառները տվեց հանեչը, քչեց դաշտը: Գառները փախնում ին, տոճկում ին, հիմանում էր, թե հիրանը ջնջանիչ են անում: Տոճկացող գառներին ամեքին մե դըրը տալում էր ու պարկցնում:

Ճեսօրին արևը դոռեց, գառները չոքցան, մտնում ին խովերը, դուս չին գալում: Սալբիարն հիմանում էր, թե պախկվում են, էլի էր տփում: Մե խոսկով, ի՞նչ ասեմ հինգ հարիր գառից հարիր գառ հիրկուն անջաղ տուն բերեց:

Մերը որ հիմացավ՝ ինչ ա Սալբիարը արե, էլի գնաց էլ Աղասու մոտը, խնթրվեց, որ թողա էթան:

Էլ Աղասին ասավ.—Ա՛յ քուր, Սալբիարը գառների տերն ա, հի—րա գառներն ա սպանե, մենք Հընչի՞մ նեղանանք: Ջահել ա:

Մերը տեսավ, որ էլ Աղասին էլի չի նեղանում, Հինքն էլ ձեն չարավ, Հըմա տղին շատ խրատեց, որ խելոք մնա, էտենց բաներ չանա:

Էլ Աղասին խելքով մարթ էր: Որ տենում ա՝ Սալբիարը շատ ուժով մարթ կրդառնա, սկսում ա զինավարժութուն սովորցնել, փայլեաններ ա կանչում, գյուլնչ բռնել ա սովորում, թուր խախծնել ա սովորում:

Էս ժամանակները Սալբիարը խելքի ա գալում, դառնում ա քսան տարեկան մե էնենց երիտասարթ, որ տենողն ասում էր՝ էր—նեկ քո տիրոջը:

Էլ Աղասին էտ գավառի տերն էր: Շատ ոխճար ու տավար ու—ներ: Մե օր էլ սարից խաբար ա գալում, որ ավազակները էլ Աղա—սու մե նախիրը տարան: Սալբիարը թուրը վերցում ա, ձինը խեձ—նում ա ու էթում ա սարը: Տենում ա, որ մե ձիավոր, Հեսա նախիրը քշում ա: Ձինը քշում ա էտ ձիավորի յանը ու սկսում են կռվել: Ինչ Սալբիարն ա, իչքան ուզում ա խփա, սպանա, չի կանում, ինչ ձի—ավորն ա Սալբիարին չի ուզում զանա, թրի տափակ յանով ա գա—նում:

Սալբիարը տեսավ, որ էտ ձիավորը չի ուզում սպանա, ասավ.—Ասա՛ տենամ, դու էտ որն ես, որ էես ուզում ընձի սպանես:

Ձիավորի Հերեսը ծասկուկ էր, Սալբիարը չէր ճանչնում:

Ձիավորն ասում ա.—Դու Հլն էրեխա յես, գնա՛ տուն, մորտ փեշի տակը մտի՛:

Սալբիարն էթում ա տուն, մորը պատմում ա:

Մերը հուշիկ ժպտում ա ու ասում ա.—Բան չըկա, Սալբիա՛ր, նիյաթդ մի՛ կախա: Գնա էլի զինավարժութո՛ւն արա, փայլեաննե—րի խետ ջուլա՛ն բռնա, ո՛ւժ հավաքա, կարող ա էլի փորցանք գա:

Հընցնում ա խինգը տարի: Էլի խաբար ա գալում, թե էլի էն ավազակները նախիրը տանում են:

Սալբիարը վերցում ա թուրը, թռնում ա ձիան քամակը, դուզը էթում ա սարը:

Տենում ա էլի էն ձիավորը, ասում ա.—Հիմի կռիվներս կռիվ ա: Յա բղի դու ընձի սպանես, յա ես չեղի կըսպանեմ, էլ խաղ չանես:

Մեշու թրով որ կռվում են, ձիավորը տենում ա, որ չէ, էսի էլ էն էրեխեն չի, մե վնաս կըտա, ասում ա.—Սալբիա՛ր, ձիանքը թո—ղենք, թրերը քցենք, ջուլաչ բռնենք:

Սալբիարը համաձայնվում ա, ձիանքից հիշնում են ու հիրար բռնում են: Էրկու սհաթ չարչարվում են, վերջը Սալբիարը ախտում ա, ուզում ա, որ դանակը խանա, ճխտա սիրտը, էս մարթը հերեսը բացում ա:

Սալբիարը որ հերեսը տենում ա, ձեռները թուլնում են: Էս ձիավորը Սալբիարի մերն էր, տղի ուժը փորցելու խըմար էրկու անգամ էտ տեսակ խաղ ա սարքում:

Սալբիարը մորը թողում ա, նիյաթ կայնում ա էն յանը:

Մերն ասում ա.—Սալբիա՛ր ջան, նիյաթտ մի՛ կախա, հիմի ես հիմանում եմ, որ դու տղամարթ ես, մե բանի պետք կրգաս:

Սալբիարը դառցեր էր քսանհինգ տարեկան, հլն կնիկ չուներ:

Էլ Աղասին ու Սալբիարի մերը մի օր ասացին.—Սալբիա՛ր, դու արդեն հասունացեր ես, քո պսակվելու ժամանակն ա, արի չեզի պսակենք, խարսնացու նախատեսեր ենք:

Սալբիարն ասավ.—Որ ուզում եք ընձի պսակեք, իրավունք տվեք խարսնացու ես ճարեմ, որ իմ սրտով հըլնի:

Էլ Աղասին ու մերն ասին.—Թե որ նախատեսեր ես, ասա՛, էս հրուպերն էթանք ուզենք:

—Ձէ՛, չեմ նախատեսե, կէթամ, ման կըգամ, ետո կըգամ, կասեմ:

Սալբիարը իրավունք առավ, հելավ ոտով հընգավ ճամբա: Շատ գնաց, թե չիչ, Աստված ա հիմանում, գնաց խասավ մե ջեղի: Տեսավ էս ջեղի ախճիկները թոփ են հելե, հախալրի գլխին կայնե, խոսում են:

Էկավ բարե տվեց, ջուր ուզեց, խմավ, գնաց մեշու էն յանը նստավ, հըմա անգաճը ախճիկների յանն ա, անլի տակով էլ հիշկում ա: Ախճիկներից ամմեն մեկը մե բան խոսաց: Մեկն ասավ. «Ինչ լավ տղա յա», մեկն ասավ. «Ըսկի էլ լավ չի», մյուսն ասավ. «Ձիթը ջոչ ա», մեկն էլ ասավ. «Որ չեզի կառնի, դու չառնես», հըմա մե ախճիկ ձեն չըխանեց: Սալբիարի անկը մնաց էտ չըխոտող ախճկա վրեն: Հիչկաց, հուր էթա, հինքն էլ հետեից բղի էթա: Ախճիկները ցրվան գացին: Էտ ախճիկն էլ միննակ մե յան գնաց: Հինքն հելավ էտ ճամբով յավաչ-յավաչ գնաց: Տեսավ, էտ ախճկան մտցավ մե երիտասարթ, թեից քաչեց, ախճիկը ջղայնացավ: Երիտասարթը մե խատ էտ ախճկան գանեց:

Որ գանեց, ախճիկն ասավ.—Սալբիարի դըրբին հոաստ գաս, Քո՛ւ Կրպո:

Սալբիարը վազավ խասավ ախճկան, ասավ.—Ախճի՛, դու ի՞նչ ասիր էս տղին:

—Ասի Սալբիարի դոբին հոաստ գաս, Քո՛ւ Կրպո:

Սալբիարը ետ դառցավ ու Կրպոյին մե Էնենց դմսուկ տվեց, որ Կրպոն մնաց նստուկ, հէսօր ես մեռել, թե հէքուց: Կրպոյի ուշկը գնաց:

Ետ դառնալով ախճկան ասավ.—Ես եմ Սալբիարը, դու իմ մասին որտեղի՞ց ես լսե:

—Սալբիարի ձենը ախշարք ա լսացե, ես հո՞ւստ լսամ: Հըմմեն Սալբիարի արևով են հորթում ուտում:

—Ախճի՛կ, ես օտարական եմ, ծանոթ չունեմ, չի՞ հըլնի, էսօր գամ ձեր տունը:

Ախճկան սիրտը թփթփաց: Էս հընչի՞ ա Սալբիարը հիրա հետեից գալում, չըլնի՞ մտկին բան կա:

Ասավ.—Սալբիա՛ր, ես ախճիկ եմ, իմ հետ ո՞նց անծանոթ երիտասարթի տանեմ: Էթամ խորս ասեմ, որ իրավունք տա, կըգամ կանչեմ:

Ախճիկը գնաց տուն, կուժը դրեց տեղը, խորն ասավ.—Հայրի՛կ, մե անծանոթ տղա ասում ա, որ տեղ չունի, ուզում ա մեր տունը գա, ի՞նչ ասեմ:

Խերն ասավ.—Գնա կանչա՛, թո գա:

Ախճիկն ուրախ-ուրախ դուս Էկավ, Սալբիարին տուն կանչեց, չեչն փռեց, Սալբիարը ախճկա խոր խետ բարևեց, նստավ:

Ախճկա խերը քոռ էր: Սալբիարի ձեռից հիմացավ, որ Սալբիարը հասարակ երիտասարթ չի, մե հսկա յա:

Ախճկա խերն ասավ.—Սալբիա՛ր, դու էլ Աղասու քվոր տղեն ես, հարուստ ես: Ես չասիք մարթ եմ, ոնչ խաց ունենք, ոնչ լուս, չեղի պեստ մարթին ո՞նց ընթունեմ ղոնախ, ես ամանչում եմ:

Սալբիարն ասավ.—Հայրի՛կ, ուտելիքի մասին մի՛ մտածեք, ես փող էլ ունեմ, խաց էլ: Ծնորակալ եմ: Իսկ պաճառն ի՞նչ ա, որ լուս չունեք:

—Պաճառն էն ա, բալա՛ ջան, որ ըստե կան օխտ ախպեր, շատ զոռբա յեն, հիրանք էլ՝ ջահել: Ժողովրթին հիրանց բոի մեչ են հավկե: Հառեչները խոսող չըկա: Էկան իմ ախճիկն ուզին, ասին. «Որ ախպորս ուզում ես տու», ախճիկս ոչ մեկին էլ չառավ: Էկան անչկերս խանին, ես էտենց հընգա տունը մացի: Ըտուց ետո էլ իրավունք չեն տալում, որ ճրաք անենք: Որ ճրաք ենք անում, գալում են տփում, ճրաքը փչում ու Էթում: Էտ ա մեր օրը, Սալբիա՛ր:

Սալբիարն ասավ.—Հայրի՛կ, էտ բոլորը ուղղել հեչտ ա, մենանկ ես մե գործով եմ Էկե, իմ բախտը քո ձեռի մեչ ա:

Խերն ասավ.—Ասա՛, բալա՛ ջան, տենամ ի՞նչ ես ասում:

—Հայրի՛կ, իմ մերն ու քեռիս ուզում են ընձի պսակեն: Իրավունք են տվե, որ ես ընձի կնիկ ճարեմ: Էսօր Էկա ձեր հախպրի

մոտը, ջուր ուզի, խմա, մեղու եռու նստա: Ուշկա ու անշկա ախճիկնե-
րի յանն էր: Ախճիկներից ամմեքը մե բան խոսաց, քո ախճիկը ձեն
չարավ: Ես տեսա, որ քո ախճիկը չըխոսաց, մթկիս մեջ ասի. «Էս ա,
որ կա», հետեից էկա ձեր տունը: Ախճիկտ ուզում եմ, թե կըտաս,
ընձի կըբախտավորցնես, թե չես տա, էտ էլ դու ջիղաս:

Ըստե խերն ասավ.—Ես հոժար եմ, հըմա հարգավոր ա, որ
ախճիկա էլ հոժար հլնի: Իմ հարփենիկի սրտով հելավ, հա', չելավ,
չէ':

Ախճիկն ասավ.—Հայրի'կ, որ դու հոժար ես, որ Սալբիարի
պեստ տղեն ընձի առնում ա, ես բան չունեմ ասելու:

Խերն ասավ.—Որ դուք հոժար եք, Աստված օխնա, բախտավոր
հըլնեք, մե բարցի ծերանաք:

Ըստե տղեն ու ախճիկը հիրար ձեռ տվին, նստան:

Սալբիարն ասավ.—Հարփենի'կ, ճրաքլուսի պաղըրաստութո'ւն
տես, խուրջինիս մեջն էլ խաց, պանիր, կարմրցրուկ խավ, գառի միս
կա, խան դի'ր սուֆրի վրեն:

Ախճիկա խերն ասավ.—Սալբիա'ր, ճրաքլուս պետք չի, մե շառ
կըգա: Սուս մնանք, հէքուց քո կնիկը չուտ առ գնա, ըտոնք չեն հի-
մացե: Քո կնիկը տանելուց ետո թո գան ընձի սպանեն, էլ դարդ
չունեմ, առանց էն էլ էս հալով աբրել չեմ ուզում:

—Ձէ', հայրի'կ,—ասավ Սալբիարը,—ես ոնչ մութ տեղ նստող
եմ, ոնչ էլ գոխտուկ ախճիկ տարող, ոնչ էլ չեզի ըստե կըթողեմ, որ
նեղութուն քաչես, իրավո'ւնք տու, էսօր ես, ինչ որ ուզում եմ, էն
անեմ:

—Դու ջիղաս, բալա', հըմա մե շառ կըգա:

—Էլ ի՞նչ շառ, որ սելերով չի գա,—ասավ Սալբիարը:

Հարփենիկը ճրաքը վառեց, նստան խաց ուտելու: Հենց էտ հրո-
պեին էկավ մեկը, առանց բարև տալու, առանց մե խոսկ ասելու,
ճրաքը փչեց ու գնաց:

Սալբիարը վերցուց նորից վառեց:

Էտ մարթը ետ դարցավ, նորից փչեց, մատը Սալբիարի վրեն
թափ տվեց, դուս էկավ:

Սալբիարը նորից վառեց: Էս մարթը ետ էկավ, փչեց և Սալբիա-
րին մե թափուկ տվեց ու գնաց:

Սալբիարը մեկ էլ վառեց: Էս մարթը ետ դառցավ:

Սալբիարը ըտըրան մե սիլը տվեց, ըտու վիզը ծովավ, էտենց
վիզը ծուռը գնաց, ախպերներին ասավ.—Ընդե մե տղա կա, հսկա
յա: Իրեք անքամ ճրաքը փչի, ձեն չարավ, չորրորթ անքամ վառեց,
ուզի փչեմ, մե սիլը տվեց, վիզս էսենց ծովավ: Էտի հսկա յա, ըտրա
խեստ գլոխ դնել չի հըլնի:

էն մեկէլ ախպերը տուն էր էկե, ամոթու բան չէր ասե, որ ախպերները վրեն չըծծղան:

Որ տեսավ ախպերն ասավ, հինքն էլ ասավ.—էտ տղեն ընձի մե էնենց յումրուղ տվեց, որ էրկու սՀաթ մացի նստուկ, էկեք խետը գլոխ չըղենենք:

Մեծ ախպերն ասավ.—Մեկտ գացեք կանչե՛ք, գա ղոնախ, խմցնենք, հարփեցնենք, սպանենք ու մե փոսի մեչ քցենք:

Ախպերներն համաձայնվան ու մեկին հղրկին Սալբիարի մոտը: Որ էկան կանչին, Սալբիարն ասավ.—Ա՛յ հայրիկ, հելի գնանք: Էս մարթն ասավ.—Բալա՛, ո՛հչ դու գնա, ո՛հչ էլ ես կըգամ, ըտոնք մուխաննաթ մարթ են, տանում են, որ սպանեն:

—Հայրի՛կ, օխտ ախպեր չի, տասնօխտ ախպեր էլ որ հըլնի, իմ մե մատը օլըրել չի կանա, էթանք:

Բիձի ձեռից բռնեց ու գացին: Որ մտան ներս, Սալբիարը տեսավ՝ ստողի տակը թրեր ա դրուկ:

Ձեն չարավ, խետները բարևավ, հուսներին սեխմեց, ասավ.—Ռունը, ռունաբը, ռունը, ռունաբը¹⁵:

Վիր հուսին սեխմեց, մնաց նստուկ: Օխտին էլ էտ տեսակով սպանեց, աների ձեռից բռնեց, էկան տուն:

Հառավոտ ջեղի մեչը տարածվավ օխտ ախպոր սպանվելու խաբարը: Հըմմեն ուրխցան: Սալբիարը գնաց տուն, էրկու օր ետո էկավ կնգան էլ տարավ, աներին էլ, լավ խառնիս արին, ուրխցան:

Թո ըստե հիրանք ուրախ աբրեն, մենք խաբար տանք Փեղուլխանից: Փեղուլխանը թճնամուն ախտեց, ետ էկավ տուն, տեսավ կնիկը չըկա, թաքավորից հիմացավ, որ կնիկը չըկա: Նամակը թե ով ա փոխե, մորն ու տղին դուս են արե: Սուք արավ, լացավ, կանչեց նամակը բերողին, բանդարկեց ու գնաց կնգան ման գալու: Իրեք տարի կնգան ու էրեխին ման էկավ, մինակ էլ Աղասու գավառը չըգնաց՝ մտածելով, որ էրեւում ա՝ հիրա երգրի սահմաններից դուս ա էկե: Որոշեց էլ կնիկ չառնի, գուց մե օր կէրևան, էտենց մե անքամից չեն կորի:

Էլ Աղասին Փեղուլխանին ենթակա իշխան էր: Փեղուլխանի խերը մեռեր էր, թաքավոր Փեղուլխանն էր:

Փեղուլխանը էլ Աղասուց օխտը տարի էր խարջը չէր վերցրե: Մարթ ա հղրկում, որ օխտը տարվա խարջը տանեն: Հարգահավաքները գալում են, որ հարգը տանեն:

Գալում են էլ Աղասու մոտ, ասում են.—Թաքավորը հրամայեք ա, որ օխտը տարվա խարջը տաա: Ուազնադարները հաչվեր են, դու

15 Նստի՛ր, վեր չկենաա (Ծ.Ա.):

բղի տարեկան քսան փուտ ոսկի տաս: Օխտը տարվա խարջը հարիր քսան փուտ ա: Ըտրանից դուս տարեկան հարուր խալիչա, հարուր չիլիմ, հարուր բեռ ցորեն, հարուր բեռ եղ, հարուր բեռ պանիր, հարուր բեռ բուրթ, հարուր եգ, հարուր կով, հարուր ձի, հազար ոխճար: Հրաման տու, թո քո նախիրները քչեն գա, մենք մեչից ջոկենք:

Էլ Աղասին սեն առավ, սուքը մտավ:

Հարգահավաքները զոռում են, ոնց որ երգրի տերը ըտոնք հըլ-նեն՝ բե՛, հա բե՛:

Որդեղի՞ց բերա, էտքանը բերե՞լ կըհըլնի:

Ձէ հիամու՛մ՝ ինչ պատասխան տա: Նիյաթ մալուլ, ձեռը ծոցը մացեր էր: Էտ վախտը էկավ Սալբիարը:

Սալբիարը, որ տեսավ հարգահաններին, հիմացավ, թե դոնախ են էկե, համմեցեք արավ, հըմա ետո, որ տեսավ չեռու ձեռը ծոցն ա մացե, ասավ. «Ըստե մե բան կա»:

Խառցուց.—Ձեռի՛, ի՞նչ ա պատահե, հընչե՞ս նիյաթ:

Ձեռին բոլորը պատմեց:

Հարգահանները մտածին.—Էս ջնհել տղեն ո՞րն ա, հո՞ւստը ծլավ: Ինչ էլ լավ բոյ-բուսաթով տղա յա, կասես թաքավորի տղա հըլնի:

Դառնալով հարգահաններին՝ ասավ.—Ձեզի թաքավորն ա հօղորկե, որ յոթ տարվա խարջը տանեք: Դուք գնացե՛ք, ես կըգամ թաքավորի պատասխանը կըտամ:

Հարգահանները հերստտան, ասին.—Երիտասա՛րթ, ափսոս ես, մի՛ խառնվի: Թաքավորի հրամանին դեմ գնացողին գլոխը կղրում են:

—Ես ու իմ չեռին թաքավորի դեմ չենք գնում, ասում եմ, որ պատասխանը ես կըտամ:

—Հենց քո պատասխանից էրևում ա, որ դու թաքավորի հարզը չես ուզում տա: Մենք հարզը կըտանենք, քո էլ ձեռ ու ոտը կըկապենք ու կըտանենք թաքավորի մոտ, քո դատաստանը թաքավորը կանա:

—Իմալ էկել եք, էնենց ե՛տ դարձեք, գացե՛ք: Էսօր մեր դոնախն եք, բան չեմ ասում:

Հարգահանները հիցցուն հոքի ին, թրերը քաշին: Սալբիարն հիրա թուրը քաշեց: Ձէր ուզում արուն թափա, բայց որ ընդոնք հարցակվան, հինքն էլ հարցակվավ: Իրեքի գլոխ թոցուց, մացածը փախան: Գացին թաքավորին ասին, որ էլ Աղասին հարզը չի տալում, մեզնից իրեքին սպանին:

Փեղուլխանը զորքը հափկեց, էկավ էլ Աղասու քաղաքը չափոնեց, կայնավ:

Մարթ հղրկեց, թե՛ էլ Աղասի՛, արի ներողութո՛ւն խնթրա, հա՛րգը տուր, էլի մա՛ց քո պաշտոնին, թե չէ, որ մե սհաթ հուչցնես, տունուտեղտ կըքանդեմ, գլոխտ կըկղրեմ, առանց էն էլ ժառանգ չունես, ծուխտ կըհանգցնեմ, մուխը գազաթիցտ դուս կըգա:

Որ էկան ասին, էլ Աղասին ասավ.—Սալբիա՛ր, տանենք հարգը տանք:

Սալբիարն ու մերը ասին.—Մենք կէթանք, թաքավորի պատասխանը կըտանք, զորք պետք չի:

Խեճան ձիանքը, գացին:

Մտոցան թաքավորի զորքին, մերն ասավ.—Թաքավո՛ր, դուք շատ եք, մենք չիչ, դուք մեզի կախտեք, խոսկ չունեմ ասելու: Քառասունչորս տարեկան կնիկ եմ, մարթիս կորցրեր եմ, էս մե տղեն ունեմ, բերեր եմ, որ քո խետ մինակ կռվի: Թե տղամարթ ես, խետը մինակ կռվի՛, թո զորքի արուն չըթափի:

Թաքավորը ջղայնացավ, թուրը քաշեց, հառաչ էկավ:

—Թաքավո՛ր,—ասավ Սալբիարի մերը,—թրով մի՛ կռվեք, գյուլաչ բռնեք, եթե Սալբիարին ախտես, իմ խետ բղի գյուլաչ բռնես: Թաքավորն հավելի ջղայնացավ, չիչ ա մնում հիրան ուտա: էս ի՞նչ կնիկ ա, որ ընձի ջղայնացնում ա:

Թաքավորն ու Սալբիարը հիրար բռնին: Թաքավորն հիցցուն տարեկան, Սալբիարը քսանըխինգ տարեկան: Սալբիարը տարավ-բերեց ու թաքավորին տվեց ջնտինը:

Վաղիրն ու սալդաթները թրերը քաշին էկան:

Սալբիարի մերը թուրը քաշեց, հռռեց էկավ ու ասավ.—Մեկտ մոտ չըգա: էստեղ հաշիվ կա:

Դառնալով Սալբիարին՝ ասում ա.—Սալբիա՛ր, թաքավորին ոտքի՛ խան, ներողութո՛ւն խնթրա:

Սալբիարը կատարեց մոր ասածը:

Մերն ասավ.—Թաքավո՛ր, դու ու քո զորքը էսօր էկեք իմ ախպոր տունը դռնախ: Հարգերի հարցը և հուրիչ շատ հարցեր հենց էսօր կըլուծվեն:

Թաքավորը մնաց չիվար: Ի՞նչ հարց բղի լուծեն: Հրաման տվեց, զորքերը մտան քաղաք:

Էլ Աղասին լսեր էր Սալբիարի հաղթության մասին: Հարուր եղ, հինգ հարուր ոխճար մորթեց, թաքավորին ու զորքին պատվելու խրմար: Էնենց սեղան բացեց, որ էլ չեմ կանա ասի: Ո՛նչ լիզուն կըպատմա, ո՛նչ էլ կարելի ա նկարագրել: էս չեֆի ժամանակ Սալբիարի մերը խաքավ հիր պսակի նվերը, որ տվեր էր Փեղուլխանը:

Փեղուլխանը, որ էս տեսավ, լավ հիշկաց կնգա անկերի մեջը, ճանչըցավ, հրնգավ ոտը, ասավ.—Ես մեղավոր չեմ, մեր բախտն էր էտ տեսակ:

Նոր էստեղ էլ Աղասին հիմացավ, որ հիր քուրը թաքավորի կնիկն ա, Սալբիարն հիմացավ, որ Փեղուլխանն հիրա խերն ա, Փեղուլխանն էլ հիմացավ, որ Սալբիարն հիրան տղեն ա:

Նորից չեֆ-ուրախութուն: Գալում ա Սալբիարի կնիկը, փաթըթվում ա կեսրարի վիզը: Ոնամին էլ ա գալում, ծանոթանում են:

Իրեք օրից ետո թաքավորն ասում ա, որ Սալբիարն էլ, խնամին էլ զան պալատում աբրեն, հըմա Սալբիարն հրաժարվում ա, ասում ա.—Ա՛յ խեր, չեզի ու մայրիկին կըտանեմ պալատը, ես ետ կըգամ: Ես էլ Աղասուն եմ հաշվում իմ խերը ու իմ չեռին: Ես էլ Աղասուց չեմ եռանա:

Էտենց էլ անում են:

Թաքավորը էլ Աղասուն բոլոր տեսակի հարգերից ազատում ա որդեցորդի, տղին էլ ասում ա.—Սալբիա՛ր, կըմնաս էլ Աղասու մոտ: Հըմա իմ մահից ետո դու պետք է թաքավոր դառնաս: Սալբիարը մնաց էլ Աղասու մոտ:

Էլ Աղասին տասներկու տարուց ետո մեռավ: Սալբիարը էկավ խոր մոտը, խերն հիրա կամքով գահից հիչավ, տղին նստցուց թախտին: Ընդոնք հիրանց մուրազին խասան, դուք էլ ձեր մուրազին խասանեք:

